Համագումարն ունեցաւ յանձնաժողովային և ընդհանուր բազմաթիւ նիստեր, ուր քննութեան առնուեցին Հայաստանի բժշկա-առողջապահութեան վերաբերող բոլոր սուր հարցերը: Ի վերջոյ, ընտրուեց կենտրոնական մարմին՝ Հայաստանի լաւագոյն բժիշկներից:

Անընդհատ առաջ էր գնում և պետական կազմակերպական աշխատանքը, ենչպէս և երկրի տնտեսական վերականգնումը: Կառավարութիւնը առանձին ուշադրութիւն դարձրեց ժողովրդի ապրուստի միջոցների հայթայթման գործին. յունւ. 27-ին կազմուեց «Սերմանման Ցատուկ Կոմիտէն», որ մեծ եռանդով վարեց սերմահաւաքման գործը՝ ամբարելով աւելի քան 350,000 փութ սերմացու: Փետրուարին 225 միլիոն ռուբլու վարկ բացուեց սերմացու գնելու համար: Մարտ 25-ին կառավարութիւնը հաստատեց այն պայմանները, որով գիւղատնտեսութեան նախարարութիւնը կատարելու էր սերմացուի բաշխումը. պետական պահեստներից սերմացու պիտի տրուէր գիւղական համայնքներին, գիւղատնտեսական ընկերութիւններին, հասարակական ու պետական հիմնարկութիւններին, պետական պաշտօնեաների ընկերութիւններին ու հասարակական խմբակցութիւններին: Ստացած սերմացուն պիտի վերադարձուէր կալի ժամանակ՝ բերքով կամ դրամով:

Մինչև մայիսի սկիզբը կառավարութիւնը ժողովրդին բաժանեց 332,660 փութ սերմացու*), որից գարի՝ 206,580փ., ցորեն՝ 65,431փ., կորեկ՝ 15,225փ., չալթուկ (բրինձ)՝ 4,026փ., հաճար՝ 2,677փ., կտաւատ՝ 1,300փ., դեղնախնձոր՝ 24,204փ., եգիպտացորեն՝ 12,368փ., բանջար՝ 534փ., դանդար՝ 315փ.: Ամենից շատ ստացաւ Կարսը՝ 76,855փ., ապա՝ Շիրակը՝ 74,605փ., Երևանի գաւառը՝ 52,372փ., Ղարաքիլիսան՝ 46,932 փութ, իսկ ամենից քիչ Դարալագեազը՝ 732փ.: Բացի այդ բաժանուեց 500 փութ բանջարանոցային սերմ, բամբակի ու ծխախոտի սերմ: Բամբակ ցանուեց ընդամենը 1,517 դեսեատին, ծխախոտ՝ 61 դես.: Կառավարութիւնը հող, վարկ, գործիքներ ու սերմացու տրամադրեց դրսից՝ Սուխումի շրջանից եկած ծխախոտագործներին: 30 միլիոն ռուբլի յատկացուեց բամբակագործներին օժանդակութիւն հասցնելու համար, 15 միլիոն ռուբլի՝ այգեգործների համար:

Մարտ 1-ին Խորհրդարանը բաց արաւ 50 միլիոն ռուբլու վարկ գիւղատնտեսական գործիքներ գնելու համար: Բաթումից բերուեցին թրակտորներ, հնձելու և քամելու մեքենաներ, դութաններ, սերդատներ, այգեգործական ու մեղուաբուծական գործիքներ, դերանդիներ, մանգաղ և այլն: Բերուեց մեծ քանակութեամբ պղնձի արջասպ՝ այգիների համար: Գիւղատնտ. նախարարութեան կենտրոնական պահեստը իր բաժանմունքների միջոցով կատարում էր մեքենաների, գործիքների և նիւթերի բաշխումը երկրում:

Պակաս կարևոր դէպք չէր և երդուեալ ատենակալների դատարանի բացումը, մարտ 15-ին: Դատական նիստի դահլիճը զարդարուած էր եռագոյն ժապաւէններով: Ներկայ էին վարչապետ Ա. Խատիսեանը, արդարադատու-

*) Սերմանման շրջանի վերջում բաժանուած սերմացուի գումարը հասաւ 375,000 փթի: